**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/12Շ**

**ք. Երևան** **«23» սեպտեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մերձմոսկովյան>> ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ադամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը

վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին

չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 831 590 000 (ութ հարյուր երեսունմեկ միլիոն հինգ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, որից 138 598 333 (մեկ հարյուր երեսունութ միլիոն հինգ հարյուր իննսունութ հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև համաձայնագիր կնքելու միջոցով:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[30] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ-ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

[30] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[32]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,<br>ՀՀ կենտրոնական գանձապետարան<br>ՀԿՀՀ 02578338<br>Հ/Հ 900011025823<br>----------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | <<Մերձմոսկովյան>> ԲԲԸ<br>ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն<br>«Ինեկոբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մասնաճյուղ<br>Հ/Հ 2050122011531001<br>ՀԿՀՀ 05800698<br>----------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

Հավելված թիվ 1
«23» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/12Շ ծածկագրով պայմանագրի

# ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
## Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ148+300-կմ152+600 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

/ՀՀ հազ. դրամ/

| ՀՀ | Աշխատանքների անվանումը | Չափ. միավ. | Քանակը | Միավորի արժեքը* | Ընդհանուր արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| I. | **Հողային աշխատանքներ** | | | | |
| 1 | V 10զ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք | $մ^3$ | 340 | 0.884 | 300.560 |
| 2 | V 10զ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ, բարձում էքսկավատորով (0.65$մ^3$), տեղափոխում լցակույտ 3.0կմ | $մ^3$ | 190 | 3.250 | 617.500 |
| 3 | III10դ գրունտի մշակում և տեղափոխում պահուստից 3.0կմ-ից լիցքի իրականացման համար | $մ^3$ | 540 | 1.670 | 901.800 |
| 4 | Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով | $մ^3$ | 1070 | 0.730 | 781.100 |
| 5 | Կողային առուների ակոսահանում մեխանիզմով | $մ^3$ | 510 | 2.549 | 1 299.990 |
| | | | | **I.Ընդամենը** | **3 900.950** |
| II. | **Ճանապարհային պատվածք** | | | | |
| 1 | Գոյություն ունեցող ա/բետոնե պատվածքի վերաօգտագործում սառը վերամշակման եղանակով հմիջ.=20սմ | $մ^2$ | 34279 | 1.860 | 63 758.940 |
| 2 | Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000$մ^2$ | $մ^2$ | 35052 | 3.312 | 116 092.224 |
| 3 | Տաք, ծակոտկեն, խոշորահատիկ ա/բետոն h=6սմ | $մ^2$ | 34279 | 6.145 | 210 644.455 |
| 4 | Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ | $մ^2$ | 34279 | 4.563 | 156 415.077 |
| | | | | **II.Ընդամենը** | **546 910.696** |
| III. | **Ուղիներ** | | | | |
| 1 | Ավազակոպճային շերտ h=10սմ | $մ^3$ | 76 | 5.450 | 414.200 |
| 2 | Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000$մ^2$ | $մ^2$ | 745 | 3.197 | 2 381.765 |
| 3 | Տաք,մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ | $մ^2$ | 736 | 4.510 | 3 319.360 |
| | | | | **III.Ընդամենը** | **6 115.325** |
| IV. | **Մուտքեր** | | | | |
| 1 | Ավազակոպճային շերտ h=10սմ | $մ^3$ | 71.15 | 5.450 | 387.768 |
| 2 | Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000$մ^2$ | $մ^2$ | 695.7 | 3.197 | 2 224.153 |
| 3 | Տաք,մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ | $մ^2$ | 687.0 | 4.510 | 3 098.370 |
| | | | | **IV.Ընդամենը** | **5 710.290** |
| V. | **Կողնակներ** | | | | |
| 1 | Կողնակների խոտածածկի մաքրում մեխանիզմով, բարձում էքսկավատորով (0,65$մ^3$), տեղափոխում լցակույտ 3,0կմ | $մ^3$ | 100 | 1.465 | 146.500 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Ցամաքուրդային գրունտի տեղափոխում պահուստից միջինը 3.0կմ-ից կողնակների իրականացման համար | $մ^3$ | 1701 | 1.635 | 2 781.135 |
| 3 | Կողնակների հարթեցում և խտացում պնևմոգլդոնով 1 հետքով 4 անցումով h=12սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով | $մ^3$ | 1701 | 0.882 | 1 500.282 |
| 4 | Կողնակների ամրացում կոպճային խառնուրդով h=10սմ | $մ^2$ | 14177 | 0.671 | 9 512.767 |
| | | | | **V.Ընդամենը** | **13 940.684** |
| **VI.** | **Գոյություն ունեցող խողովակների մաքրում, գլխադիրների, բացվածքների իրականացում և նորոգում** | | | | |
| 1 | Գոյություն ունեցող ջրթող խողովակների մաքրում ձեռքով, բարձում և տեղափոխում լցակույտ 3.0կմ/ 6 հատ/ | $մ^3$ | 24 | 8.254 | 198.096 |
| 2 | Գլխադիրների իրականացում, բարձրացում միաձույլ բետոնով B15 / 4 հատ/ | $մ^3$ | 1.9 | 68.024 | 129.246 |
| 3 | Բացվածքների իրականացում միաձույլ բետոնով B15 /2 հատ/ | $մ^3$ | 0.7 | 67.159 | 47.011 |
| 4 | Վաքի իրականացում միաձույլ բետոնով B15/1 հատ/ | $մ^3$ | 0.6 | 80.768 | 48.461 |
| 5 | Գլխադիրների սվաղում և ներկում | $մ^2$ | 10.5 | 3.051 | 32.036 |
| | | | | **VI.Ընդամենը** | **454.849** |
| **VII.** | **Փոքր կամուրջներ** | | | | |
| **Ա.** | **ՊԿ39+50** | | | | |
| 1 | Պարապետերի նորոգում միաձույլ բետոնով B15 | $մ^3$ | 0.4 | 76.920 | 30.768 |
| 2 | Պարապետի սվաղում և ներկում | $մ^2$ | 24.5 | 3.051 | 74.750 |
| 3 | Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ | $մ^2$ | 94 | 5.567 | 523.298 |
| **Բ.** | **ՊԿ37+31** | | | | |
| 1 | Մուտքի և ելքի բացվածքների նորոգում միաձույլ բետոնով B15 /4հատ/ | $մ^3$ | 2.8 | 67.159 | 188.045 |
| | | | | **VII.Ընդամենը** | **816.861** |
| **VIII.** | **Ճանապարհի կահավորում** | | | | |
| **Ա.** | **Մետաղական արգելափակոցներ** | | | | |
| 1 | Գոյություն ունեցող մետաղական արգելափակոցների վնասված հեծանի ապատեղակայում, բարձում, տեղափոխում բազա | գծ.մ | 24.0 | 2.108 | 50.592 |
| 2 | Նոր հեծանի տեղակայում գոյություն ունեցող մետաղական հենասյուների վրա (պողպատե թիթեղ δ=4մմ) | գծ.մ | 24.0 | 12.400 | 297.600 |
| 3 | Գոյություն ունեցող մետաղական արգելափակոցների ներկում /146 գծ.մ/ | տոն | 3.50 | 10.513 | 36.796 |
| 4 | Մետաղական արգելափակոցների տեղադրում մետաղական սյուներով (սյուների քանակը -163հատ, վերջնական տարր -18հատ/180կգ; անկյունագծային կապ 108 հատ/576.45կգ, պողպատե թիթեղ d =4մմ) | գծ.մ | 430.0 | 23.804 | 10 235.720 |
| **Բ.** | **Բետոնե արգելափակոցներ** | | | | |
| 1 | Եզրապատերի նորոգում միաձույլ բետոնով B15 | $մ^3$ | 2.5 | 76.920 | 192.300 |
| 2 | Եզրապատերի սվաղում և ներկում | $մ^2$ | 90 | 3.050 | 274.500 |
| **Գ.** | **Ազդանշանային սյուներ** | | | | |
| 1 | C1 տիպի պլաստիկ ազդանշանային սյուների տեղադրում | հատ | 266 | 5.850 | 1 556.100 |
| **Դ.** | **Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1$մ^2$** | | | | |
| | 1.1 | կմ | 1.546 | 141.591 | 218.900 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 1.5 | կմ | 1.922 | 62.331 | 119.800 |
| | 1.6 | կմ | 0.832 | 115.264 | 95.900 |
| | 1.8 | կմ | 0.253 | 88.538 | 22.400 |
| | 1.2.1 | կմ | 8.347 | 212.220 | 1 771.400 |
| | | | | VIII.Ընդամենը | 14 872.007 |
| | | | | Ընդհանուրը | 592 721.663 |

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 2
## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

**Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ156+700-կմ160+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքների**

/ՀՀ հազ. դրամ/

| ՀՀ | Աշխատանքների անվանումը | Չափ. միավ. | Քանակը | Միավորի արժեքը* | Ընդհանուր արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| I. | **Ճանապարհային պատվածք** | | | | |
| 1 | Փոսային նորոգում h=3-5սմ | $մ^2$ | 1413 | 5.562 | 7 859.106 |
| 2 | Փոսային նորոգում h=5-12սմ | $մ^2$ | 2148 | 11.820 | 25 389.360 |
| 3 | Փոսային նորոգում հիմքով | | | | |
| ա. | Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000$մ^2$ | $մ^2$ | 2052 | 3.302 | 6 775.704 |
| բ. | Տաք, ծակոտկեն, խոշորահատիկ ա/բետոն h=6սմ | $մ^2$ | 2052 | 6.139 | 12 597.228 |
| 4 | Հարթեցնող շերտ տաք, մանրահատիկ ա/բետոնից „Բ" տիպ հմիջ.=3սմ | տոն | 817.6 | 47.154 | 38 553.110 |
| 5 | Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ | $մ^2$ | 33136 | 5.612 | 185 959.232 |
| | | | | 1.Ընդամենը | 277 133.740 |
| II. | **Կողնակներ** | | | | |
| 1 | Կողնակների խոտածածկի մաքրում մեխանիզմով, բարձում էքսկավատորով (0,65$մ^3$), տեղափոխում լցակույտ 3,0կմ | $մ^2$ | 9920 | 0.073 | 724.160 |
| 2 | Կողնակների ամրացում կոպճային շերտով h=10սմ | $մ^2$ | 10257 | 0.666 | 6 831.162 |
| | | | | 2.Ընդամենը | 7 555.322 |
| III | **Մայթեր** | | | | |
| 1 | Մայթերի եզրերի բուսականության քաղհանում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 3.0կմ | $մ^2$ | 523 | 0.088 | 46.024 |
| 2 | Գոյություն ունեցող տեղաշարժված եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը) | գծ.մ | 159 | 1.156 | 183.804 |
| 3 | Գոյություն ունեցող մայթի քայքայված ա/բ ծածկույթի քանդում բարձում, տեղափոխում լցակույտ 3.0կմ | $մ^2$ | 708 | 0.155 | 109.740 |
| 4 | Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա | գծ.մ | 174 | 15.074 | 2 622.876 |
| 5 | Ավազահատիկ ա/բետոն h=3սմ | $մ^2$ | 660 | 3.658 | 2 414.280 |
| | | | | 3.Ընդամենը | 5 376.724 |
| IV | **Թեքուղիներ** | | | | |
| 1 | Գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը) | գծ.մ | 82 | 1.156 | 94.792 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա /խորացված դիրքով/ | գծ.մ | 82 | 15.074 | 1 236.068 |
| 3 | Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում թեքուղիներում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա | գծ.մ | 84 | 15.074 | 1 266.216 |
| | | | | **4.Ընդամենը** | **2 597.076** |
| **V.** | **Ուղիներ** | | | | |
| 1 | Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ$^2$ | մ$^2$ | 702.0 | 3.188 | 2 237.976 |
| 2 | Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ | մ$^2$ | 1705 | 5.560 | 9 479.800 |
| | | | | **5.Ընդամենը** | **11 717.776** |
| **VI.** | **Մուտքեր** | | | | |
| 1 | Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ | մ$^3$ | 1.10 | 6.00 | 6.600 |
| 2 | Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ | գծ.մ | 14.0 | 29.88 | 418.306 |
| 3 | Խողովակի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով | մ$^2$ | 14.2 | 1.80 | 25.603 |
| 4 | Ավազակոպճային շերտ h=10սմ | մ$^2$ | 311.4 | 0.54 | 169.090 |
| 5 | Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ$^2$ | մ$^2$ | 382.0 | 3.188 | 1 217.816 |
| 6 | Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ | մ$^2$ | 1175.0 | 4.51 | 5 293.375 |
| | | | | **6.Ընդամենը** | **7 130.790** |
| **VII.** | **Ջրթող խողովակների մաքրում և վերականգնում** | | | | |
| 1 | Տարբեր բացվածքներով խողովակների մաքրում ձեռքով/8հատ/, բարձում և տեղափոխում լցակույտ 3.0կմ | մ$^3$ | 110 | 7.930 | 872.300 |
| 2 | d=1.0մ ե/բ խողովակների գլխադիրների նորոգում միաձույլ բետոն B15 | մ$^3$ | 0.96 | 110.103 | 105.699 |
| 3 | d=1.0մ ե/բ խողովակի գլխադիրի թևերի վերականգնում միաձույլ բետոնով B12.5 | մ$^3$ | 4.5 | 63.800 | 287.100 |
| 4 | Նույնը d=1.25մ ե/բ խողովակի համար | մ$^3$ | 1.5 | 63.800 | 95.700 |
| 5 | Նույնը 2x2մ բացվածքով ե/բ խողովակի համար B15 | մ$^3$ | 1.8 | 66.944 | 120.499 |
| 6 | d=1.0մ ե/բ խողովակների վաքերի իրականացում միաձույլ բետոնով B12.5 | մ$^3$ | 12.5 | 77.208 | 965.100 |
| 7 | Նույնը d=1.25մ ե/բ խողովակի համար | մ$^3$ | 3.2 | 77.208 | 247.066 |
| 8 | Նույնը 2x2մ բացվածքով ե/բ խողովակի համար B15 | մ$^3$ | 3.8 | 80.300 | 305.140 |
| | | | | **7.Ընդամենը** | **2 998.604** |
| **VIII** | **Կողային առուների մաքրում** | | | | |
| 1 | Կողային առուների(III8վ գրունտ) մաքրում էքսկավատորով (0.3մ$^3$), տեղափոխում լցակույտ 3.0կմ | մ$^3$ | 778.0 | 2.105 | 1 637.690 |
| | | | | **8.Ընդամենը** | **1 637.690** |
| **IX.** | **Գոյություն ունեցող վաքերի քանդում** | | | | |
| 1 | ՊԿ14+22-ՊԿ15+40 ձախից և ՊԿ14+14-ՊԿ15+40 աջից գոյություն ունեցող քայքայված բետոնե վաքերի/Ե-1-20/ քանդում էքսկավատորով (0.65մ3), բարձում, տեղափոխում լցակույտ 3.0կմ | գծ.մ | 244.0 | 0.445 | 108.580 |
| | | | | **9.Ընդամենը** | **108.580** |
| **X.** | **Ճանապարհի կահավորում** | | | | |
| **Ա.** | **Ճանապարհային նշաններ** | | | | |
| 1 | Առավելության | հատ | 21 | 52.953 | 1 112.013 |
| 2 | Հատուկ թելադրանքի/1 սյան վրա ամրացվում է 2 նշան/ | հատ | 12 | 41.758 | 501.096 |
| **Բ.** | **Արգելափակոցներ** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գոյություն ունեցող ազդանշանային սյուների ապատեղակայում, տեղափոխում լցակույտ 3.0կմ | հատ | 134.0 | 3.412 | 457.208 |
| 2 | C1 տիպի նոր պլաստիկ ազդանշանային սյուների տեղադրում | հատ | 244.0 | 5.850 | 1 427.400 |
| 3 | Մետաղական արգելափակոցների տեղադրում մետաղական սյուներով (սյուների քանակը -142հատ, վերջնական տարր -6 հատ/60կգ; անկյունագծային կապ 36հատ/192.15կգ, պողպատե թիթեղ d =4մմ) | գծ.մ | 467 | 20.692 | 9 663.164 |
| | ավազակոպիճ | $մ^3$ | 4.62 | 3.333 | 15.398 |
| 4 | Գոյություն ունեցող մետաղական արգելափակոցների ներկում | տոն | 4.0 | 19.849 | 79.396 |
| **Գ.** | **Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1$մ^2$** | | | | |
| | 1.1 | կմ | 0.527 | 141.746 | 74.700 |
| | 1.5 | կմ | 2.680 | 61.940 | 165.999 |
| | 1.6 | կմ | 0.295 | 114.915 | 33.900 |
| | 1.8 | կմ | 0.335 | 88.657 | 29.700 |
| | 1.2.1 | կմ | 4.679 | 248.600 | 1 163.199 |
| | 1.2.2 | կմ | 1.90 | 85.263 | 162.000 |
| | 1.14.1 | $մ^2$ | 66.24 | 2.177 | 144.204 |
| | | | | **10.Ընդամենը** | **15 029.378** |
| | | | | **Ընդհանուրը** | **331 285.680** |

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը»՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքայի կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀԿՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Մերձմոսկովյան>> ԲԲԸ
ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն
«Ինեկոբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մասնաճյուղ
Հ/Հ 2050122011531001
ՀԿՀՀ 05800698

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«23» սեպտեմբերի 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/12Շ ծածկագրով պայմանագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

**Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ148+300-կմ152+600 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման**

| No | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | սկիզբը | ավարտը |
| 0 | Լաբորատոր փորձարկումներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 1 | Հողային աշխատանքներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 50 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 2 | Ճանապարհային պատվածք | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 3 | Ուղիներ և մուտքեր | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 4 | Կողնակներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 5 | Խողովակներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 55 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 6 | Կամուրջներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 60 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 7 | Անվտանգության էլեմենտներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ** | | **Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո** | **Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը** |

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

**Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ156+700-կմ160+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման**

| No | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | սկիզբը | ավարտը |
| 0 | Լաբորատոր փորձարկումներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 1 | Ճանապարհային պատվածք | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 2 | Կողնակներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 3 | Մայթեր | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 70 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 4 | Թեքուղիներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 65 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 5 | Ուղիներ և մուտքեր | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 95 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 6 | Ջրթող խողովակներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 50 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 7 | Կողային առուներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 55 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| 8 | Անվտանգության էլեմենտներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ** | | **Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո** | **Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքայի կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Մերձմոսկովյան>> ԲԲԸ
ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն
«Ինեկոբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մասնաճյուղ
Հ/Հ 2050122011531001
ՀՎՀՀ 05800698

(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված թիվ 4*
«____» _____ 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/12Շ ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
«____» _____ 2019թ. կնքված
ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/12Շ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1**
**23.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/12Շ պետական գնման պայմանագրի**

**ք. Երևան** **<<18>> հոկտեմբերի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մերձմոսկովյան>> ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ադամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 03-ի թիվ 1331-Ն և 1209-Ա որոշումների և հիմք ընդունելով Կողմերի միջև 23.09.2019թ. կնքված N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/12Շ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2019թ. Վճարման ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,<br>ՀՀ կենտրոնական գանձապետարան<br>ՀԿՀՀ 02578338<br>ՀՀ 900011025623 | <<Մերձմոսկովյան>> ԲԲԸ<br>ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն<br>«Ինեկոբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մասնաճյուղ<br>Հ/Հ 2050122011531001<br>ՀԿՀՀ 05800698 |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/12Շ գնման պայմանագրի
□18□ հոկտեմբերի 2019թ. կնքված
Թիվ 1 համաձայնագրով
Հավելված թիվ 1

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

## Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ148+300-կմ152+600 և Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ156+700-կմ160+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

(ՀՀ դրամ)

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Գնման ենթակա աշխատանքների անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | 45231177/78 | Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ148+300-կմ152+600 հատվածի հիմնանորոգման աշխատանքների | | | | | | | | | | 533 440 000 | 533 440 000 | 533 440 000 | **533 440 000** |
| 2 | 45231177/74 | Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ156+700-կմ160+200 հատվածի հիմնանորոգման աշխատանքների | | | | | | | | | | 298 150 000 | 298 150 000 | 298 150 000 | **298 150 000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական ցանցապետարան
ՀԿՀՀ 02578338
ՀՀ 900011025823

---
/ստորագրություն/

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Մերձմոսկովյան>> ԲԲԸ
ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն
«Ինեկոբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մասնաճյուղ
Հ/Հ 2050122011531001
ՀԿՀՀ 05800698

---
/ստորագրություն/